«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ֆինանսների նախարարի հրամանի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 165-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը՝

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «կարող է ընդգրկվել նաև ոչ հանրային հատվածի կազմակերպության առավելագույնը երկու ներկայացուցիչ» բառերը փոխարինել «կարող են ընդգրկվել նաև ոչ հանրային հատվածի կազմակերպության ներկայացուցիչներ» բառերով։

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Ա. ՋԱՆՋՈՒՂԱՋՅԱՆ